



«Ճիրակացու ճեմարան»
 միջազգային գիտակրթական համալիր



ՄԲ ՍՈՎՈՐՈՂԻ ՈՐԱԿՆԵՐ

ՎԵՐԼՈՒԾՈՂ



ՀԱՎԱՍԱՐԱԿԵՌՎԱԾ



ԲԱՆԻՄԱՑ



ՀԵՏԱԶՈՏՈՂ



ՄՏԱԾՈՂ



ՀԱՂՈՐԴԱԿՑՎՈՂ



ՀԱՄԱՐՁԱԿ



ՀՈԳԱՍԱՐ



ԼԱՅՆԱԽՈՂ



ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ



ՄԲ ՍՈՎՈՐՈՂԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՄԲ ծրագրերի նպատակն է դաստիարակել ինտելեկտուալ մտածողությամբ մարդկանց, որոնք կաշխատեն ստեղծել ավելի լավ և խաղաղ աշխարհ: Կրտսեր դպրոցի ծրագրի (ԿԴԾ) շրջանակում այն դրսևորվում է ՄԲ սովորողի նկարագրի, նրա մարդկային որակների ձևավորման և զարգացման միջոցով:

Հետազոտող. Մենք բավարարում ենք մեր հետաքրքրասիրությունը՝ զարգացնելով հետազոտական հմտություններ: Մենք կարողանում ենք սովորել և՛ ինքնուրույն, և՛ այլոց հետ: Մենք սովորում ենք ոգևորված և պահպանում ենք ուսանելու նկատմամբ սերը ողջ կյանքի ընթացքում:

Բանիմաց. Մենք զարգացնում և կիրառում ենք համատեքստային հասկացությունները՝ ուսումնասիրելով գիտելիքը առարկայական միջակայքերում: Մեզ հետաքրքրում են համաշխարհային նշանակություն ունեցող խնդիրները և գաղափարները:

Մտածող. Մենք կիրառում ենք քննադատական և ստեղծագործական մտածողության հմտությունները՝ վերլուծելու և բարդ իրավիճակներում պատասխանատու քայլեր ձեռնարկելու համար: Մենք նախանձախնդիր ենք պատճառաբանված, բարոյական որոշումներ կայացնելու հարցում:

Հաղորդակցվող. Մենք վստահորեն և ստեղծարարությամբ կարողանում ենք արտահայտվել մի քանի լեզուներով, տարբեր ոճերով ու եղանակներով: Մենք արդյունավետորեն ենք համագործակցում՝ ուշադրությամբ լսելով այլ անհատների և խմբերի տեսակետները:

Սկզբունքային. Մենք գործում ենք ազնվությամբ, արդարության խոր զգացումով և բոլոր մարդկանց արժանապատվության ու իրավունքների հանդեպ հարգանքով: Մենք պատասխանատու ենք մեր արարքների և դրանց հետևանքների համար:

Լայնախոհ. Մենք սերում ենք մեր սեփական մշակույթից և պատմությունից, բայց գնահատում և հարգում ենք նաև ուրիշների ստեղծած արժեքներն ու ավանդույթները: Մենք ընդունում ենք բազմակարծությունը, և մեր աճը պայմանավորված է փորձառությամբ:

Հոգատար. Մենք դրսևորում ենք կարեկցանք, սրտացավություն և հարգանք այլ մարդկանց հանդեպ: Մենք ծառայելու ոգի ունենք և աշխատում ենք հոգուտ դրական փոփոխությունների մարդկանց կյանքում և մեզ շրջապատող աշխարհում:

Համարձակ. Մենք անորոշ իրավիճակներում դրսևորում ենք վճռականություն. գործում ենք ինչպես առանձին, այնպես էլ համագործակցությամբ՝ ուսումնասիրելու արդիական գաղափարներն ու նորարարական ռազմավարությունները: Մենք դիմացկուն ենք դժվարությունների հանդիպելիս և հնարամիտ ենք արագորեն փոփոխություններ կատարելու հարցում:

Հավասարակշռված. Մենք հասկանում ենք մտավոր, ֆիզիկական և հուզական ոլորտների միջև հավասարակշռության կարևորությունը մեր և այլոց բարօրության համար: Մենք ըմբռնում ենք մեր փոխկապվածությունն այլ մարդկանց հետ և այն աշխարհին, որում ապրում ենք:

Վերլուծող. Մենք խորապես հետաքրքրված ենք ինչպես համընդհանուր, այնպես էլ մեր սեփական գաղափարներով ու փորձառությամբ: Մենք աշխատում ենք վեր հանել, վերլուծել մեր ուժեղ և թույլ կողմերը՝ մեր ուսումնառությանն ու անհատական զարգացմանը նպաստելու համար: